ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան
«04» հուլիսի 2025 թ.

МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության

*Հեղինակ՝ ի.գ.թ., դոցենտ, Ղուկասյան Ա. Պ.*

# *ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ «Ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցավորության հիմնախնդիրները»

Մագիստրոս կրթական ծրագիր (հեռակա)՝ 042101.04.7
«քրեական իրավունք և դատավարություն»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7

## Անոտացիա

### Դասընթացի բովանդակության համառոտ նկարագրությունը

Հայաստանի ռեցիդիվ հանցավորության դինամիկայի և կառուցվածքի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ հատուկ ռեցիդիվի (նմանատիպ կամ համանման հանցագործությունների կատարում) տեսակարար կշիռը հանցավորության ռեցիդիվի ընդհանուր կառուցվածքում բավականին բարձր է: Իր հերթին հանցագործների մասնագիտացումը համանման հանցագործությունների կատարման մեջ անխուսափելիորեն հանգեցնում է նրանց հանցավոր «արհեստավարժության», քրեաիրավական իմտությունների աճին: Հատկապես վտանգավոր միտում է այն, երբ հանցագործության ռեցիդիվը վերածվում է պրոֆեսիոնալ հանցավորության:

Ռեցիդիվի և հանցավոր պրոֆեսիոնալիզմի հասարակական վտանգավորությունը հիմնականում պայմանավորված է հետևյալով.
ա) ռեցիդիվիստներն ու պրոֆեսիոնալ հանցագործները իրենց բազմակի հանցագործություններով ավելացնում են պատճառվող վնասը՝ հասարակությանը, պետությանը և առանձին անձանց,
բ) կրկնակի և ավելի հանցագործությունների կատարումը վկայում է տվյալ անձանց կայուն ձգտման մասին՝ շարունակել հանցավոր գործունեությունը, չցանկանալով հետևել հասարակական համակեցության նորմերին, նույնիսկ եթե իրենց նկատմամբ կիրառվել են քրեաիրավական միջոցներ,
գ) ռեցիդիվիստներն ու պրոֆեսիոնալ հանցագործները՝ կրելով հանցավոր սովորույթներ, բարքեր, հատուկ հոգեբանություն, ակտիվորեն տարածում են դրանք, ձևավորելով պտղաբեր հող նախնական հանցավորության համար՝ նպաստելով բնակչության քրեականացմանը:

Ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության դեմ հաջող պայքարը անպայմանորեն պետք է հանգեցնի դրանց կրճատմանը, ինչպես նաև նախնական հանցավորության նվազեցմանը, քանի որ վերջինս զրկվում է իր բազայից: Ոչ պատահական է, որ գրեթե բոլոր երկրների օրենսդիրները ռեցիդիվային հանցավորության և հանցավոր պրոֆեսիոնալիզմի դեմ պայքարը դիտարկում են որպես իրավապահ մարմինների գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը, և այս խնդիրները միշտ եղել են և մնում են արդիական՝ քրեական, քրեակատարողական գիտությունների և կրիմինոլոգիայի շրջանակում: Ռեցիդիվը միշտ դիտարկվել է որպես քրեական օրենսդրության և քրեակատարողական համակարգերի փորձաքար:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրվելու են ռեցիդիվային և պրոֆեսիոնալ հանցավորության դեմ պայքարի օրենսդրական և իրավակիրառման խնդիրները, քրեաիրավական, կրիմինոլոգիական և քրեակատարողական բնութագրերը, հանցագործ-ռեցիդիվիստի և հանցագործ-պրոֆեսիոնալի անձի առանձնահատկությունները՝ բացահայտելու և վերլուծելու այս բացասական հասարակական երևույթները պայմանավորող գործոնները, մշակելու կազմակերպաիրավական առաջարկություններ ու միջոցառումներ՝ դրանց նվազեցման համար:

### Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է, որոնք ունակ կլինեն տեսական և կիրառական մակարդակով վերլուծել, հասկանալ և իրավական մեխանիզմների միջոցով հակազդել ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցագործության երևույթներին:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- Ուսանողներին ծանոթացնել ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցավորության տեսական հիմունքներին, ձևերին և պատճառներին,
- Վերլուծել իրավական արձագանքները և օրենսդրական մոտեցումները՝ ուղղված նման հանցավորության կանխարգելմանը,
- Քննարկել միջազգային փորձը և կիրառման մեթոդները՝ պրակտիկ մակարդակում:

**Դասընթացի օբյեկտը և առարկան**

Դասընթացի օբյեկտն է՝ հասարակական հարաբերությունները, որոնք ձևավորվում են ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցագործության պայմաններում իրավական միջամտության արդյունքում:

Դասընթացի առարկան է՝ ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցավորության քրեաիրավական, քրիմինոլոգիական և քրեակատարողական ուսումնասիրությունը:

**Դասընթացի մուտքային պահանջները**

Ուսանողը պետք է տիրապետի արդի քրեական օրենսդրության հիմնադրույթներին, հանցավորության կանխարգելման և դատապարտման ինստիտուտների գործունեության սկզբունքներին: Պետք է ունակ լինի վերլուծել և համադրել իրավական կարգավորումները ազգային և միջազգային մակարդակներում:

**Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները**

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

**Գիտելիքները՝**

1. Ռեցիդիվ և պրոֆեսիոնալ հանցավորության իրավական բնույթի ըմբռնում;
2. Քրեական քաղաքականության և քրեակատարողական համակարգի ազդեցությունը՝ կրկնահանցագործների նկատմամբ;
3. Օրենսդրական կարգավորումների տարբերակները տարբեր երկրներում:

**Հմտությունները՝ գիտելիքի կիրառման հմտությունները՝**

1. Իրավական փաստաթղթերի վերլուծություն;
2. Իրավական իրավիճակների համադրման կարողություն;

**ընդհանրական իմացական հմտությունները՝**

1. Ինքնուրույն հետազոտական գործունեություն;
2. Վերլուծական և համադրական մտածողություն;

**Կարողունակությունը (կոմպետենցիան)՝ Ինքնուրրույնությունը և պատասխանատվությունը՝**

1. Իրավական դիրքորոշման ձևակերպում;
2. Մասնագիտական գործունեության նկատմամբ պատասխանատվության ընկալում;

**Դասավանդման եղանակները և մեթոդները**

Դասընթացի շրջանակում կիրառվում են հետևյալ մեթոդները՝ տեսական դասախոսություններ, գործնական սեմինարներ, դեպքերի վերլուծություն (case study), խմբային քննարկումներ, հետազոտական աշխատանքներ, իրավիճակային առաջադրանքներ, բանավեճեր, թեստավորում:

**Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում**

Դասընթացը ներառված է «քրեական իրավունք և դատավարություն»՝ ..

ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար:

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում:

| Ուսումնական աշխատանքի տեսակները | Ընդամենը, ակադ. ժամեր |
|---|---|
| 1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝ | 144 |
| 1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝ | 18 |
| 1.1.1. Դասախոսություններ | 8 |
| 1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝ | 10 |
| 1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ | 4 |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝ | 122 |
| 1.2.1. Քննություններին նախապատրաստում | |
| 1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել) | |
| 1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | Ստուգարք |

**Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը | Դասախոսու-թյուններ | Գործնական / սեմինար պարապմունքներ |
|---|---|---|---|
| **1** | **2=3+4** | **3** | **4** |
| **Թեմա 1. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցավորության տեսական հիմքերը** | **29** | **2** | **2** |
| **Թեմա 2. . Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցագործության իրավական կարգավորումը** | **29** | **2** | **2** |
| **Թեմա 3. . Ռեցիդիվիստների քրիմինոլոգիական բնութագրերը** | **28** | **2** | **2** |
| **Թեմա 4. Պրոֆեսիոնալ հանցագործության կանխարգելման ուղղություններ** | **29** | **1** | **2** |
| **Թեմա 5. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցագործության կանխարգելման միջազգային փորձը** | **29** | **1** | **2** |
| Ընդամենը | **144** | **8** | **10** |

**Դասընթացի թեմաների բովանդակությունը**

**Թեմա 1. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցավորության տեսական հիմքերը**

- Ռեցիդիվի հասկացությունը, տեսակները, առանձնահատկությունները:
- Պրոֆեսիոնալ հանցագործության դասական և արդի տեսությունները:
- Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցագործության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան փորձում:

**Թեմա 2. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցագործության իրավական կարգավորումը**

- Ռեցիդիվի իրավական կարգավորումը ՀՀ քրեական օրենսգրքում:
- Ռեցիդիվի և հանցավոր պրոֆեսիոնալիզմի իրավական տարբերակները՝ ՌԴ, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ:
- Ռեցիդիվի դրսևորումները քրեակատարողական իրավունքում:

**Թեմա 3. Ռեցիդիվիստների քրիմինոլոգիական բնութագրերը**

- Ռեցիդիվիստների սոցիալ-դեմոգրաֆիական առանձնահատկությունները:

- Հանցավոր կարիերայի փուլերը:
- Քրեածին գործոնները և պայմանները՝ նպաստող ռեցիդիվի ձևավորմանը:

**Թեմա 4. Պրոֆեսիոնալ հանցագործության կանխարգելման ուղղություններ**

- Քրեակատարողական կանխարգելման մեխանիզմները:
- Սոցիալական վերահսկողություն և վերաինտեգրում:
- Հասարակական վերահսկողության գործիքակազմ:

**Թեմա 5. Ռեցիդիվի և պրոֆեսիոնալ հանցագործության կանխարգելման միջազգային փորձը**

- Միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵՄ, ԵԽ) մոտեցումները:
- Հաջողակ ազգային ծրագրերի համեմատական վերլուծություն:

## Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ


1. Уголовное право Армении и России. Общая и Особенная части / Отв. ред. С.С.Аветисян, А.И.Чучаев. – М.: Контракт, 2014. – 800 с.,
2. Уголовное право России. Общая часть : учебник для бакалавриата, специалитета и магистратуры; под редакцией О. С. Капинус. — 2-е изд. — Москва : Издательство Юрайт, 2019. — 704 с.
3. Уголовное право России. Особенная часть в 2 т. Том 1 : учебник для бакалавриата, специалитета и магистратуры; под редакцией О. С. Капинус. — 2-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2019. — 556 с.
4. Уголовное право России. Особенная часть в 2 т. Том 2 : учебник для бакалавриата, специалитета и магистратуры; под редакцией О. С. Капинус. — 2-е изд., перераб. и доп. — Москва : Издательство Юрайт, 2019. — 639 с.
5. Уголовное право России. Общая часть: Учебник / Под ред. Ф.Р. Сундурова, И.А. Тарханова. - 2-е изд., перераб. и доп. - М.: Статут, 2016,
6. Уголовное право России. Части Общая и Особенная. 10-е издание. Учебник под ред. Рарога А.И., электронная книга, Издательство: Проспект, 2018. -841 с,
7. Уголовное право России. Особенная часть. Преступления против личности: учебник для вузов. Под ред. В.И. Гладких и А.К. Есаяна. — М.: Юрайт. 2020 - 206 с,
8. Журавлев М.П., Наумов А.В., Никулин С.И., Понятовская Т.Г., Рарог А.И., Янеленко Б.В. Уголовное право России. Части Общая и Особенная (учебник; под ред. заслуженного деятеля науки РФ, д.ю.н., проф. А.И. Рарога; издание 10-е, перераб. и доп.). - "Проспект", 2018 г.,
9. Уголовное право зарубежных стран (Особенная часть) : учебно-методическое пособие / Н. Е. Крылова, А. В. Малешина, А. В. Серебренникова; МГУ, юрид. ф-т. - М. : Статут, 2019,

10. Криминология: Общая, Особенная и Специальная части: Учебник / Под ред. О.В.Старкова. М., 2012;
11. Криминология / Под ред. Дж.Ф. Шели / пер.с англ. СПб., 2003
12. риминология: Учебник / Под ред. В.Н.Кудрявцева и В.Е.Эминова. М., 2005;
13. Криминология: Учебник для вузов / Под общ. ред. д.ю.н., проф. А.И.Долговой. - 3-е изд., перераб. и доп. М.,: Норма, 2007;
14. Криминология: Учебник для вузов / Под ред. В.Д.Малкова. М., 2011;
15. Криминология: Учебник для студентов вузов / Под ред. Г.А.Аванесова. М., 2006;
16. Криминология: Учебник для юридических вузов / Под ред. В.Н.Бурлакова, В.П.Сальникова, С.В.Степашина. СПб., 1999;
17. Алексеев А.И., Овчинский В.С., Побегайло Э.Ф. Российская уголовная политика: преодоление кризиса. М., 2006;
18. Алексеев А.И., Солопанов Ю.В. Криминологическая характеристика и профилактика рецидивной преступности: Лекция. М.; Изд-во МВШМ МВД СССР, 1979;
19. Алексеев А.И., Солопанов Ю.В. Профилактика рецидива преступлений. М., 1980;
20. Анисимков В.М. Тюрьма и его законы. Саратов. 1998;
21. Анисимков В.М., Рыбак М.С. Актуальные проблемы уголовно-исполнительного права. Саратов, 1998;
22. Антонян Ю.М, Голубев В.П., Кудряков Ю.Н. Личность корыстного преступника. Томск, 1989;
23. Антонян Ю.М. Криминология. Избранные лекции. М., 2005;
24. Антонян Ю.М. Психологическое отчуждение личности и преступное поведение: Генезис и профилактика дезадаптивных преступлений. Ереван, 1987;
25. Антонян Ю.М. Социальная среда и формирование личности преступника: Неблагоприятные влияния на личность в микросреде: Учебное пособие. М., 1975;
26. Армянский Судебник Мхитара Гоша / Под ред. Б.М.Арутюняна. Ереван, 1954;
27. Бажанов О.И., Ефимов М.А., Саркисова Э.А. Предупреждение повторных преступлений (по материалам исследования рецидивной преступности в Белорусской ССР): Учебное пособие. Минск; Изд-во Мин. ВШ МВД СССР, 1988;
28. Бриллиантов А.В. Дифференциация наказания и степень исправления осужденных к лишению свободы. М., ВНИИ МВД России, 1997;
29. Бытко Ю.И. Понятие рецидива преступлений (Исторический очерк). Саратов,
30. ытко Ю.И. Учение о рецидиве преступлений в российском уголовном праве: история и современность. Саратов, 1998. С.20;
31. Волошин Н.И., Зелинский А.Ф. Структура преступного поведения рецидивистов. М., изд.

ВНИИ МВД СССР, 1979;
32. Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения. Ереван, 2007;
33. Григорян М.В. Учение о преступлении по уголовному праву (на арм.). Ереван, 2001;
34. Гришанин П.Ф.Ответственность преступников-рецидивистов по советскому уголовному праву: учебное пособие. М., 1974;
35. Гуров А.И. Профессиональная преступность: Прошлое и современность. М.; Юрид. лит., 1990;
36. Дементьев С.И. Лишение свободы. Уголовно-правовые и исправительно-трудовые аспекты. Ростов, 1981;
37. Ефимов М.А., Шкурко В.А. Рецидивная преступность и ее предупреждение. Минск, Вышэйш. шк., 1977;
38. Зелинский А.Ф. Квалификация повторных преступлений: Учебное пособие. Волгоград, 1976;
39. Зелинский А.Ф. Рецидив преступлений: структура, связи. прогнозирование. Харьков, 1980;
40. Иващенко А.П. Индивидуальное криминологическое прогнозирование и профилактика рецидива преступлений: Учебное пособие / Под ред. Ю.В.Солопанова. М.; Изд-во МВШМ МВД СССР, 1980;
41. Иншаков С.М. Зарубежная криминология: Учебное пособие для вузов. М., 2003;
42. Караев Т.Э. Повторность преступлений. М., 1983;
43. Козлов, Александр Вениаминович. Ответственность за совокупность преступлений. М., 2006, 163с.;
44. Кузнецова Н.Ф. Проблемы криминологической детерминации / Под ред. В.Н.Кудрявцева. М., 1984;
45. Ларина, Любовь Юрьевна. Совокупность преступлений: уголовно-правовой и криминологический аспекты. Рязань.- 2011, 268 с.;
46. Лебедев С.Я. Антиобщественные традиции, обычаи и их влияние на преступность. Учебное пособие. Омск, 1989;
47. Лебедев С.Я. Традиции, обычаи и преступность. Теория, методология, опыт криминологического анализа. М., 1995
48. алков В.П. Повторность преступлений: понятие и уголовно-правовое значение. Казань, 1970;
49. Малков В.П. Совокупность преступлений: вопросы квалификации и назначения наказания. Казань, 1974;
50. Малков В.П., Тимершин Х.А. Множественность преступлений / Учебное пособие. Уфа,

1995;
51. Накинов Б.И. Проблемы рецидивной преступности: теория и практика. Монография. Туркестан, 2011;
52. Орешкина Т.Ю. Рецидивная преступность и уголовная ответственность за рецидив преступлений в США: Учебное пособие. М., 1981;
53. Памятники русского права. М., 1953. Вып.2.;
54. Панько К.А. Вопросы общей теории рецидива в советском уголовном праве.- Воронеж; Изд-во Воронеж. ун- та, 1988;
55. Пинчук В.И. Множественность преступлений: Учебное пособие. – СПб., 1999;
56. Попов В.И. Особо опасный рецидив и его предупреждение органами внутренних дел. РИО МВД УССР. Киев, 1975;
57. Попов В.И. Рецидив и организованная преступность. М., 1998;
58. Разинкин В.С. Воры в законе и преступные кланы. М., Рос. криминолог. ассоц., 1995;
59. Рецидив преступлений. Учебное пособие / Под ред. С.П. Бузыновой. М., 1980;
60. Рецидивная преступность: понятие и криминологическая характеристика / Под ред. Э. Я. Стумбиной. Рига, Зинатне, 1983;
61. Романов С.А. Воры-карманники. От ширмача до шипача. М., 2005;
62. Сафарян Г.Г. Армянская политико-правовая мысль в XI-XIII веках. Ереван, 1995.;
63. Солопанов Ю.В., Квашис В.Е. Рецидив и рецидивисты. М., 1971;
64. Судебник Смбата Спарапета / Под ред. А.Г.Галстяна. Ереван, 1958;
65. Сундуров Ф.Р. Лишение свободы и социально-психологические предпосылки его эффективности. Казань, 1980;
66. Таганцев Н.С. О повторении преступлений. Спб., 1867;
67. Тэсс Л.В. Воры: «в законе» и прочие (Часть I; II). Рига; 1993;